1888 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ

Ամենայն Հայոց Վեհափառ Տ. Մակար Կաթուղիկոսի ճանապարհորդութիւնը դէպի Թիֆլիզ եւ Բազու։

ՏԵՍ «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳԻՐՆ։

Անցեալ սեպտեմբերի 3ին (1888) Ծայրագոյն Պատրիարգ Տ. Մակար Կաթուղիկոսը կոնդակով հաղորդեց Էջմիածնի Սինոդին, որ ինքը մտադիր է Տեառն օգնականութեամբ սեպտեմբերի ամսի 11ին ուղեւորել դէպի Թիֆլիզ եւ յանձնեց Սինոդին կարեւոր կարգադրութիւններն անել առ այն։ Սինոդը նոյն օրը կազմելով Վեհափառ Կաթուղիկոսի ճանապարհորդութեան ուղեցոյցը՝ ուղարկեց Կովկասի կառավարչապետի դիւանատան պ. կառավարչին տնօրինելու, ինչ որ հարկն է, և այս ուղեւորութեան մասին տեղեկութիւն տուեց Վրաստանի և Երեւանայ թեմական Առաջնորդներին։ Սեպտեմբերի 9ին Կովկասի կառավարչապետի դիւանատան կառավարիչ գնդապետ Շատիլովը հեռագրով յայտնեց Սինոդին թէ հաղորդուած է Տփխիսի փոստ—հեռագրատան շրջանի կառավարչին պատրաստելու Պատրիարքի գալստեան համար կառքեր և ձիեր. իսկ Գանձակի և Երեւանի նահանգապետներին առաջադրած է օժանդակելու բարեյաջող և անարգել ճանապարհորդութեան։ Արդէն ամսի 4ից Վեհափառ Տէրը անդադար կատարումն էր տալիս Սինոդի անդամների և ատենադպրի զեկուցած անյետաձգելի անհրաժեշտութիւն ունեցող գործերին։ Եւ միեւնոյն ժամանակ պատրաստութիւն էր տեսնվում Վեհափառի ուղեւորութեան համար. սեպտեմբերի 10ին երեկոյեան Պատրիարք Կաթուղիկոսը գնալով տաճարը ներկայ եղաւ Խաչվերացի նախատոնակին, շրջապատուած Վաղարշապատի և շրջակայ տեղերի բնակիչների խուռն բազմութեամբ. որոնք շտապել էին Վեհափառի օրհնութիւնը առնելու, Նորա առժամանակեայ Ս. Էջմիածնից բացակայելու պատճառով։ Եկեղեցի մտնելը և վերադարձը դէպի վեհարան ներկայացնում էր որդւոց իրանց հօրից բաժանուելու մի ճշգրիտ պատկեր.

Ամսի 11ին վաղ առաւօտեան վեհարանը խռնուած էր Վե-